

ԿՐԹՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՆԿԱՆ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ «ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ»

(Россія, 8 մայիսի А. Луквинскій).

Ամեն անգամ՝ երբ մօտենում է Ս. Յովհաննէս աւետարանիչ առաքեալի տօնը, միտքս ակամայ հրապուրւում է դէպի աստուածածանօթութեան այն անսահման խորքերը, աստուածածանօթութեան, որ յայտնի է մարդկային հայեացքին այս առաքեալի բերանով, որը արժանացել է իւր, առ Տէրը, սիրոյ համար հասնելու աստուածաբանութեան խորին խորհուրդներին, Հեթանոս աշխարհը ի դէմս սակաւաթիւ ընտրեալների—որոնք սրտով ձըգտում էին «անհասանելի» Աստուծոյ մաքուր սեղանին՝—ճշմարտութեան որոշ նախազգացումներ ունէր, և նա լուսաւորում էր Աստուծոյ «Բանի» ճշմարիտ լուսով, «որ լուսաւորում է աշխարհ եկող իւրաքանչիւր մարդուն»։ Բայց այդ լոյսը թոյլ էր նշուլում մեղքերով և Հեթանոսական սնահաւատութիւններով մթադնած բանականութեան մէջ, և Հեթանոս իմաստասէրների «Բանի» մասին բոլոր ուսմունքը, որ մարդկութեանը ուսուցանում ու յայտնի էր դարձնում Աստուծուն նրա բոլոր բարձրութեամբ՝ «Աստուածաբանութեան» մասին միայն մութն ակնարկութիւն, թոյլ նախածանօթութիւն էր։

Աստուծոյ Հոգին, որ լուսաւորում էր հին կտակարանի ընտրեալներին, չթաքցրեց նրանց հայեացքից վարդապետութիւնը, թէ «Բանը» Աստուած է, և յաւիտենից գոյութիւն ունեցող իմաստութիւն։ Բայց մեղաւոր աշխարհի փրկութեան համար այդ իմաստութեան յայտնութեան մեծ խորհուրդը հին կտակարանի հին մարդու մտքին անըմբռնելի էր։ Աստուծոյ իմաստութեան վերջնականապէս և կատարելապէս մարմնացումն Մովսէսի օրէնքների

մէջ համարելով, հին կտակարանի հրէաները, սակաւաթիւ ընտրեալ արդարների բացառութեամբ, նրա ուրիշ մարմնացումն էլ չէին սպասում:

Առաջին անգամ Յովհաննէս առաքեալը իւր գերամբարձ աստուածաբանութեամբ, մարդկային մտքին հասանելի կերպով, լրիւ պարզեց յաւիտենից ծածկուած խորհուրդը թէ «Բանը» ճշմարիտ Աստուած է, Որի միջոցով «ամեն ինչ սկսաւ լինել», Նա կեանքի աղբիւրն է և ճշմարիտ լոյսը, թէ Նա է և «միջնորդ» արդար Յիսուսը, որ մեր մեղքերի, և ոչ միայն մեր, այլ ամբողջ աշխարհի մեղքերի, քաւութիւնը դարձաւ: Հին կտակարանի արդարները, շնայելով իրանց խորին երկիւղածութեան, որ Աստուծոյ տեսութեան խորհրդին «հաղորդ» էին, մինչև անգամ ի դէմս «աստուածախօս» Մովսէսի, որ ջեռմեռանդօրէն աղօթում էր—Տիրոջը տեսնելու մեծ շնորհն ունենալ՝ արժանի չեղան Աստուածային կեանքի խորհրդի յայտնութեանը: Ճշմարտութեան պայծառ դէմքը նրանց համար ծածկուած մնաց, նրանք տեսան միայն նրա «հետքը», միայն այն ահարկու Արդար Դատաւորի կերպարանքը, որ դարձել էր դէպի մարդկային մեղքերը:

Աստուծոյ էութեան մէջ դէպի մեղաւոր մարդը չը տեսնելով ուրիշ կամք, բացի յանցանքի հատուցումն,— հատուցման այդ օրէնքի վերայ էլ հին կտակարանի մարդը կողմակերպեց իւր կեանքն ու մարդկային բոլոր յարաբերութիւնները: Այստեղից «ակն ընդ ական», այլ և, «թող չխնայի քո անձը», դառնում էին կենցաղավարութեան օրէնքի իսկակական հիմքը:

Ս. Յովհաննէս Աստուածաբանը մերկացնում է այս հին կտակարանեան խաւար ծածկոյթը և աշխարհին ցոյց է տալիս Աստուածութեան լուսաւոր դէմքը: «Աստուած սէր է»: Ահա մեծ ճշմարտութիւնը, որ իւր ճառագայթներով լուսաւորում է ամբողջովին խաւար, չարատանջ, արդարութեան ծարաւի աշխարհը: Սէրը ոչ միայն քաղցր աչքով պատասխանում է երկիւղած երկրպագուների աղնիւ հաւատարմութեանը, այլ ինքն է դնում նրանց մօտ

մինչև դժողքի անդունդը: Սէրը այն է, որ ոչ թէ մենք սիրեցինք Աստուծուն, այլ որ Նա սիրեց մեզ և ուղարկեց Իւր Որդին մեր մեղքերի քաւութեան համար: Ինչպէս լուսացնցուղ արեւը հալածում է խաւարին, այսպէս ևս այս մեծ խօսքը հալածեց երկիւղն ու յուսահատութիւնը, որ ճնշում է մարդկութիւնը, Թեղծուկ, պատժից դողացող ստրուկ մարդը դարձաւ Աստուծոյ որդի, թէև ընկած, անառակ, բայց իւր Մեծ, Գթած Հօրից սիրուած որդի:

Սիրելիք, մենք այժմ Աստուծոյ որդիք ենք... Սնէծքի և արտաքսման սոսկալի կնիքը բարձւում է սիրոյ, «սիրելիք» մեծ խօսքով, այն, այդ այժմ Աստուծոյ առ մարդն յարաբերութիւնների միակ և իսկական արտայայտիչն է, և դրա մէջ սրբան ուրախալի, սիրտը հըրճուեցնող և հոգին թեւաւորող միտք կայ, մարդուն յայտնուած Աստուծոյ սիրոյ մեծ և ուրախարար խորհուրդը անխուսափելի կերպով իրան է հետեցնում և մարդկային յարաբերութեան մէջ էլ արմատական փոփոխութիւն մտցնում: Մարդկային կեանքը աստուածային կեանքի ստուերն է և ոչ թէ այն մտքով որ Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդը, հոգևոր կեանքի իսկական մարդկային վեհ երևոյթների մէջ միշտ էլ պէտք է արտայայտի իւր Նախատիպը, — մարդկութիւնը միշտ և անխուսափելի կերպով, լիովին գիտակցաբար շինում է իւր երկրաւոր բնակարանը երկնաւոր այն բնակարանին նման՝ որը երևում էր նրան մարդարէական տեսիլքներով, և ներշնչած երկրաւոր իմաստունների գուշակութիւններով երկնայինի մասին: — Սէրը ճանաչեցինք մենք այնու, որ Նա Իւր անձը դրեց մեր համար, և մենք էլ պարտաւոր ենք, ասում է առաքեալը, դնել մեր անձերը եղբայրների համար: — Եւ որդեակներ, սիրենք ոչ թէ խօսքով կամ լեզուով, այլ գործով և ճշմարտութեամբ...: Աստուծոյ պատուէրն այն է, որ մենք հաւատանք Նրա Որդուն — Յիսուս Քրիստոսին — և սիրենք իրար: ... Աստուած սէր է, և ով որ սիրոյ մէջ է ապրում, Աստուծոյ մէջ է ապրում, Աստուած էլ նրա մէջ»:

Հին կտակարանի մարդը տեսնելով Աստուծոյ առ
մարդն յարաբերութեան մէջ ստրկի և տան տիրոջ յա-
րաբերութիւն՝ գիտէր միայն Աստուծոյ երկիւղը և բարե-
բարուած ստրկի սէրը, ստրկի, որին պատժելը իրաւունք էր
և սիրելը շնորհ՝ ոչ յօրինակ այլոց: Սակայն այս սէրը
իսկական սէր չէ, որ կարող լինէր վերածնութեան աղբիւր
դառնալ: Առ Աստուած իսկական սէրը կարող է աճել առ
«եղբայրն» — առ մարդն, որպէս առ պատկերն Աստուծոյ —
սիրով: «Ով ասում է, ես Աստուծուն սիրում եմ, բայց իւր
եղբօրը ատում է, նա ստախօս է: Որովհետեւ նա, որ չի
սիրում իւր եղբօրը, որին տեսնում է, ինչպէս կարող է
սիրել Աստուծուն, որին չի տեսնում»: Երախտագիտական
սէրն առ Աստուած եսականութեան չոր ոստ է, որից չի
կարող աճել ծառ, որի տերեւների տակ ծածկւում են ոչ
միայն մարդիկ այլ և երկրաւոր բոլոր արարածները:

Բոլոր մարդկութեան վշտով պէտք է ապրել, պէտք է
հաւատալ Աստուծոյ ամենքին փրկող սիրոյն: Յովհաննէս
Առաքեալի խօսքին համեմատ, «ով ուրանում է Որդուն,
ուրանում է և Հօրը»: Որովհետեւ միայն մարմնաւութեան
խորհուրդը յայտնում է Աստուծոյ սէրը դէպի բոլոր աշխար-
հը: Եւ միայն նա, ով իւր անհուն սիրով առ տառա-
պեալ մարդկութիւնը կը մբռնի այս խորհուրդի ուրախարար
միտքը և կը հաւատայ Աստուծոյ Որդուն, կզգայ Աստուծոյ
մէջ իսկական հայրը: Այդպիսի հաւատացեալը «կունե-
նայ յաւիտենական կեանք» և դատաստան չի մտնի:

Առաքեալի այս համառօտ խօսքերի մէջ պատմւում է
նոր խորհուրդ — մարդկային սրտի վերածնութիւնը: Հրէա-
կան աշխարհը չէր սիրում «մարդուն»: Նա փափագում
էր ոչ թէ փրկիչ Մեսիային, որով պէտք է օրհնուէին երկրի
բոլոր ազգերը, այլ վրէժխնդիր Մեսիային: Հրէայ օրինա-
կանների արիւնածարաւ հայեացքին ներկայանում էին
դիակների լեռներ և շատ արիւնի ծովեր, որը պէտք է թա-
փէր Մեսիան հրէաների կատաղութիւնը յաղեցնելու և
ամբարտաւան հեթանոսներին ընկճելու համար: Նախան-
ձախնդիր հրէաների այս ցնորքների մէջ չէր կարող ոգեւո-

րութիւն առաջ բերել և նրանց սրտերը հրապուրել աշխարհի Փրկչի գաղափարը: Եւ հրէական ժողովուրդը չէր հաւատում Աստուծոյ Որդուն, բայց դրանով ուրանում էր Հայր Աստուծուն էլ ու մնում էր անպատու թղենի, «ծարաւի անապատ»:

Միայն եղբօրը սիրողը ընդունակ է բարձրանալ մինչև ճշմարիտ հաւատը առ Աստուած, առ Փրկիչն ամենայնի: Այս հաւատի հետ նա զգում է սրտում Աստուծոյ շնորհը, որ այժ է տալիս հրաժարուել աշխարհից, չարութիւնից և մեղքից և գնալ սիրոյ արքայական պողոտայով: Այդպիսի հաւատացեալի սրտում հենց այստեղ, երկրի վերայ չքանում է ամենայն երկիւղ ապագայի առաջ, և ծնւում է պայծառ յոյս: Դեռ այստեղ, երկրի վերայ, նա զգում է իւր մէջ յաւիտենական կեանքն ու երկնային ուրախութիւնը, չղարհուրելով Աստուծոյ բարկութիւնից մինչև անգամ ահեղ դատաստանի օրն իսկ: Աստուծոյ շնորհիւ սրբուած իւր խղճով, իւր մէջ զգալով աստուածային սիրոյ շունչը, նա միշտ պատրաստ է առաքեալի հետ ապել «սիրելիք», եթէ մեր սիրտը մեղ չի դատապարտում, մենք դէպ ի Աստուած համարձակութիւն ունենք: Եւ ինչ էլ խնդրենք, կստանանք նրանից:

Թարգ. Յ. Ա. Ե.

